



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material








558

1999 7



# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

~~Խ~~ 2 3

ՔԱՐՔԱՐՄԱԿԱ ՇԵՆՔՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ Ե Օ Ւ

ԶՐԱԴԱՐԱԿԱ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՄ

Տ. ԳԱԼՅԱԹԻԱ, Ի ՑՊԱԲՆԻ ՅԱՎԱՅԱՆԻ ՄԻԱՆԱՌԱՅԵԱՆ

1861



28 1026

9 1026-60

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾՎԱԿԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ՀԱՅՈՑ

Երբ Վագերնուու բարսյական ու նիւթական վիճակը լաւցնելու համար պէտք եղած քննութիւնն ընելու և միջոց մը մասածելու ձեռնարկու կ'ըլլանք, այս նախապատրաստական ուսման մէջ անկարելի է աչքերնուս առջեւ ըլլերել Օսմանեան պետութեան ազատասեր քաղաքականութեանը՝ մեր Վագին վրայ ունեցած աղդեցութիւնը և յարուցած նորանոր պիտոյքները։

Այսօր՝ նրբամիտ չայու մը համար արեւու պէս յայտնի ճշմարտութիւն մ'ըլլալու է թէ, Օսմանեան կառավարութիւնը մեր Վագին հետ այնչափ կապված է, և մենք ալ անոր այնչափ յարած ենք որ՝ անոր հարսաութիւնն ու պայծառութիւնն ըզմեղ որչափ որ ճիխացուցեր ու բարեկրթեր են, այնչափ ալ անոր աղքատութիւնն ու տկարութիւնը մեր նիւթական ու բարսյական վիճակը կրնան վատթարացնել։

Յաօր՝ ողջամիտ քաղաքակետ անձանց համար ճշմարտութիւն մ' եղած է՝ որ դրացի, մերձակայ և մինչեւ անգամ հեռակայ ազգաց շահերը մի և նոյն են, իրարու հակառակ չ'են և ըլլալու չ'են։ Ազգի մը ճշմարիտ օդտին դէմ է աղքատ ու տգետ դրացի մ' ունենալ կամ աղքատ ազգաց հետ յարաբերութիւն ունենալ։ Իրաւ է, դեռ այսօր ալ կան այս կարծիքին դէմ քարոզող ազգեր ու իմաստակներ, բայց տեսնելով որ նախապաշտմանց թանձր ամփերը օր ըստ օրէ փարատելով քաղաքակըր թութեան կենսատու արեւը կը ծագի, ներեւի է մեզի յուսաւ որ իր անընդդիմակաց ճառագոյթներովը պիտի հալեցնէ ու սպառէ մի ջն դարուն հնարած մարդատեաց քաղաքականութեան սառնամանիքը։

Եթէ իրարմէ տարբեր ու բացակայ գտնիլ վող աղքերուն հետեւած քաղաքականութեանցը մէջ ներդաշնակութեան հարկը ուղղափոհ քաղաքակետք ընդունած են, հապա մի և նոյն օդ ծծող, մի և նոյն երկիր բնակող, մի և նոյն բարք ու մի և նոյն շահ ունեցող ազգերը՝ որ չափ աւելի հարկադրեալ են իրենց մասնաւոր բարելաւութեանը համար իրարու փոխադարձ բարելաւութեանը աշխատելու։

Ետ մանաւանդ՝ երբ կը տեսնենիք ազգ մը

որ իր տիրապետական իրաւունքն ու զօրութիւնը վեհանձնաբար չափաւորելով՝ նուածած ազգերուն բարելաւութիւնը կը մտածէ, կրօնիքնին աղաստ կը թողաւ, ազգային սովորութիւններնին անխափառ կը պահէ, անխափիր կը պաշտպանէ ամեն ազգի իրաւունքը, վերջապէս՝ քաղաքակրթութեան բարիքները մի և նցին չափով կը տարածէ ամենուն վրայ, հարկ չ'է ըսել թե որչափ կը թեթեւնայ նուածեալ ազգաց բեռը: Եւ որչափ որ քաղցրանայ լուծերնին՝ այնչափ ալ կ'աւելնայ պարտիքն երախտագիտութեան. որչափ որ խօսելու ու շարժելու ազատութիւննին չափանայ, այնչափ ալ հասարակաց օգտին կամ երկրին բարելաւութեանը աշխատելու պարտքը կը մեծնայ:

Արդ՝ Օսմանեան պետութիւնն ալ որպէս հավանաւորութեանը տակ գտնուած է բարերազրաբար մեր սիրելի Ազգին ամենամեծ մասը, Եւրոպական քաղաքակրթութեան օրինացը համեմատ ընթացք մ'ընդունելով՝ քսան եռասուն տարիէ ի վեր սկըսած է յառաջանալ. և հետեւաբար իր նոր ընդունած քաղաքականութեան աղատական սկզբանցը հաւատարիմ գլունը վելով՝ իր իշխանութեանը ներքեւ գտնված զանազան կրօնիքներ դաւանօղ, զանազան սովորութիւններ ունեցող, զանազան լեզուներ խօ-

սող ազգերուն անհանկ արտօնութիւններ չնորհած է որոնցմէ զաւրկեն ուրիշ շատ նուաճեալ ազգեր նոյն խեկ Եւրոպայի մէջ :

Տարակյա ըս կայ որ այս ընթայքով և դարին պահանջած արագութեամբը քայլելով Օսմաննեան տէրութեան նիւթական ու բարոյական վիճակը օր օրի պիտի բարելաւի ու զարգանայ :

Ի այս բաւական չ'է որ ինքը միայն այս յօժարամտութիւնն ունենայ , պէտք է որ հասարակութիւնն ալ ուղէ քայլել ու նպաստամատոց ըլլալ երկրին յառաջդիմութեանը : Տէրութիւնը կ'ուղէ , կը քառողէ ու ամեն զոհ կ'ընէ ահան , այս նպատակին հասնելու համար . բայց հասարակութենէն ակնկալած նպաստին և ոչ մէկ քառորդը կը տեսնէ : Ուրիշ ամեն տեղ ժողովուրդին կողմէն կ'սկսի շարժումը և Տէրութիւնները այն շարժման ենթակայ կ'ըլլան միայն . հոս ընդհակառակը Տէրութիւնն է շարժումը տուօղը , շարժման գլուխն անցնող և 'զամի աճապարօղն անգամ : Ի՞նչեր կրնար ընել արդեօք և ի՞նչեր պիտի կրնայ ընել , երբ հասարակութիւնն ալ Տէրութեան չափ կամք ունենայ ու մանակից ըլլայ :

Այս հասարակութեան մէջ Հայոց ազգը մէծկակ մաս մը կը կազմէ և Հայ ազգը գիտէ

Թէ իր ճակատագիրը Օսմանեան պէտութեան ճակատագրէն կախեալ է , իր միակ ապաւէնը , իր ամբողջութիւնը պահպանօղը , իր կարծառութեան աղքեւրը , իր լեզուին ու կրօնքին պաշտպանը , նյն ինքն Օսմանեան կառավարութիւնն է . բայց չը գիտէր թերեւս աղէկ մը թէ ինչ միջոցներով և ինչ սահմանի մէջ կրնայ նպաստել իր կենդանութեանն ու յառաջդիմութեանը պատճառ եղող տէրութեանը և այն երկրին որուն մէջն է իր հայրենիքն ալ :

Յայտնի է որ Ազգ մը հարուստ ու լուսաւորեալ կ'ըսվի և հետեւաբար հզօր , երբ զայն կազմօղ անհատները հարուստ ու լուսաւորեալ են , և ընդհակառակին Ազգ մը աղքատ ու տգէտ կը կոչիլ և հետեւաբար տկար , երբ աղքատ ու տգէտ անհատներէ բաղկացեալ ըլլայ : Եւ որովհետեւ Հայ աղգը Օսմանեան Պետութեան հասարակութեանը մէկ մեծ մասն է , ինչպէս ըսինք վերը , ուրեմն եթէ Հայ աղգը իր նիւթական ու բարոյական վիճակին բարելաւութեանը աշխատի՝ անուղղակի կերպով օժանդակած կ'ըլլայ Օսմանեան Տէրութեան պայծառութեանն ալ և երախտագիտութեան նուիրական պարտք մը հատուցած կ'ըլլայ , այն աղգին , որոյ չնորհիւը դարեր թաւալելով մինչեւ այսօր կրցեր է ապրիլ ու դերձ միալ ամեն

վասնգեւ : Եւ եթէ այս պարոքը չը կատարէ  
պարտաւոր կը մնայ առաջի Վասուծոյ, առաջի  
կայսերական կառավարութեան, առաջի իր  
բազմարդիւն նախահարցը, և առաջի ապագայ  
սերունդներուն :

Ուրեմն եթէ Օսմանեան Տէրութեան  
պայծառութիւնը մեր Վզգին ալ օգտակար ու  
կարեւոր է և եթէ Վզգին յառաջդիմութիւնը  
անուղղակի կերպով Տէրութեան յառաջդիմու-  
թեանն ալ կը նապատէ, մէկ բան մը կը մնայ  
մեզի գիտնալ . — Դիանալ ազգերնուս բարոյա-  
կան ու նիւթական պիտոյքը, և զանոնք գոհա-  
ցընելու համար հարկ եղած միջոցներն ուսանիլ :

Քանի որ Օսմանեան կառավարութիւնը  
սկսած է Եւրոպայի պետութեանց քաղաքակա-  
նութեանը հետեւիլ և անոնց պիտոյքներն ու  
ընթացքը իրեն սեպհականնել, կառավարական  
ձեւն ու դրութիւնը, մասնաւորաց վիճակը,  
երկրագործութիւնը, առեւտուրը և արուեստ  
ները մեծամեծ փոփոխութեան ենթակայ եղան  
և մինչեւ անգամ յեղափոխութեան մէջ ընկան :  
Վսի ընսական օրէնք մըն է որոց չը հետեւիլ անէ  
կարելի է . բայց նախատես և խոհեմ ազգ մը  
գուշակելով իր հետեւած քաղաքականու-  
թեանը ապագային վրայ ունենալիք ազգեցու-  
թիւնը, պէտք է որ պատրաստիլ, իր ընթացքը

գարին պահանջած արագութեանը համեմատել գիտնայ , նոր ի նորս ծնած կամ երեւան ելած պիտոյը բները յագեցնելուն միջոցները սովոր , մէկդի նետէ նախապաշարմանց ցնցուակը և ըզնոր մարդն զգենու . ըսել կ'ուզենք թէ որովէ հետեւ Վզգը Տէրութեան պէս Եւրոպից քաղաքականութիւնը իրեն առաջնորդ բռնելու պարտաւորեցաւ , ո՞լ պէտք է որ այն քաղաքականութեան պահանջած բոլոր փափոխութիւնները ըստ պարագային ի գործ դնէ :

Վրդեօք ազգերնիս այս նոր ծագած քաղաքականութեան սգին հասկցած է . իր նիւթական ու բարոյական վիճակը՝ քաղաքակրթեալ ազգաց վիճակին նմանցնելու համար ի՞նչ ըստ մինչեւ հիմա , և ի՞նչ պէտք է որ ընէ . ահա մէզի համար ամենակարեւոր խնդիրը :

Երբ ազգերնուս արդի բարոյական վիճակը քննենք ու բաղդատենք քսան եռսուն տարի յառաջ ունեցած վիճակին հետ , յիրաւի մէծ տարբերութիւն մը կը գտնենք դէպ ի բարելաւութիւն . բայց ազգի մը բնականաբար ըստած յառաջիմութիւնը բաւական չ'է 'զանի պահպանելու համար , հապա հետեւած քաղաքականութեանը պահանջած արագութեանը համեմատ յառաջանալու է որ կենդանի մնայ : Երբ ազգային դաստիարակութեան կարեւորութիւ-

նը ամեն բերան կը խոստովանի ու կը քարողէ ,  
երբ ազգը իր բոլոր մտադրութիւնը այս ամե-  
նակարեւոր խնդրոյն վրայ դարձուցած կ'երե-  
ւի , ցաւելով կ'ըսենք որ դեռ գոհացուցիչ միւ  
ջոց մը ի գործ դրված չը տեսնըլիք ազգային  
գասափարակութիւնը ծաւալելու համար : Դեռ  
այսօր Հայաստանի մէջ այնչափ հազուագիւտ  
է գրել կարդալ գիտցող մարդ մը՝ որչափ հա-  
զուագիւտ է Ովիմիանիայի վայրենիներուն մէջ :

Արդ պէտք է սա լաւ ի միտ առնել , որ ե-  
թէ ասանկ դանդաղ ու յամբաքայլ յառաջ եր-  
թանք , ապագային մէջ մեր գործն աւելի ևս  
կը ծանրանսց , այսինքն՝ քանի մը տարիէն աւելի  
մէծ արագութեամբ ընթանալ կը հարկաւորի ,  
որոյ համար աւելի ազգու ու հզօր միջոցներու  
կը կարօտինք :

Եթէ ասանկ վարանեալ ու տատանեալ ա-  
մեն մերձակայս ազգերէն ետ մնանք , այն կարո-  
ղութիւնն որ այսօր ունինք , քանի մը տարիէն  
եսոքը կը մնայ արդեօք . և այն կարողութիւնն  
որով այսօր հետար է գործել , քանի մը տարիէն  
եսոքը կը բաւել արդեօք : Ուր թողունք որ մէկ  
կողմէն ալ նիւթական վիճակիս օր ըստ օրէ  
գէշնալու վրայ է :

Վցի մը նիւթական վիճակին բարելուու-  
թեանք որչափ որ կ'օդնէ իր բարոյական վիճա-

կը , նոյնչափ ալ նիւթական վիճակը կը նպաստէ իր բարոյական զգացմանց զարդացմանը , մէկը առանց միւսին չը կրնար լաւանալ , կամ երբ մէկին աշխատինք , միւսին ալ աշխատած կ'ըլլանք : Այսիւ կը հետեւի որ եթէ բարոյական կացութիւնիս դեռ յետափաղաց վիճակի մը մէջ է կամ ծանրաբայլ կը յառաջանայ , տարակոյս չը կայ որ նիւթական վիճակնիս ալ օր քան զօր պիտի վատթարանայ . մանաւանդ որ , ինչպէս վերը ըսինք , (Օսմանեան պետութեան հետեւած նոր քաղաքականութիւնը մէծ յեղափոխութեան մէջ ձգած է երկրիս հողագործական , առեւտրական ու արուեստական կացութիւնը :

Եւրոպիոյ մէքենաշարժ ճարտարութիւնները մէր բնիկ ձեռագործ արուեստներուն յաջորդեցին . Եւրոպիոյ գրամական առատութիւնն ու ելմտական ճարտար կարգադրութիւնները իրենց սեպհականեցին մինչեւ ցարդ մէր բնիկ սեղանաւորաց ըրած շահերը . Եւրոպիոյ լուսաւորեալ երկրագործութիւնը հալածեց ու խափանեց մէր հինաւուրց հողագործութիւնը . արդէն խկ Եւրոպիոյ երկրագործական շատ քերքերը սկսած են գալ մարտիլ մէր բնիկ քերքերուն հետ աշխարհի էն պարագաներին վրայ և էն գեղեցիկ կիմային տակ : Երբ կը առեսնենք ամեն օր ամեն վայրկեան

այս անհրաժեշտ յեղափոխութեանց քաղցր և  
միանգամայն դառն արդիւնքը . Երբ կը տես  
նենք որ հազարաւոր արուեստաւորներ՝ ձեռւ-  
լինին ծոցերնին դրած՝ աչլինին ապարդիւն  
գործիքներնուն վրայ ձգած ու օրական հացեր-  
նին ճարելէ յուսահատած՝ անշարժ ու ախուր  
նստած կը մտածեն . Երբ կը տեսնենք որ հա-  
րիւրաւոր ընտանիքներ հարստութեան ու շւ-  
քեղ պալասներու մէջ կը քնանան ու դառն  
չքաւորութեան ճանկերուն մէջ կ'արթնան .  
Երբ կը տեսնենք որ խումբ խումբ որբ ու ան-  
տէր մանկութիք փողոցներն ու շուկաները կը  
թափառին , մոլութեանց օդը միայն ծծելալ  
կ'ապրին , ազգերնուս անպատճեմիւն ու  
բեռ և Տէրութեան վեսասոիթ հապատակներ  
կ'ըլլան . Երբ կը տեսնենք Վախոցի բազմաբե-  
զուն դաշտաց շատերը և անոնց մէջ չայա-  
տանի պատճեական երկիրները՝ լըեալ ու խո-  
պան . Երբ կը տեսնենք իր արիմասիրտ զաւկը-  
ները՝ օսար աշխարհներ պանդիստած , սով ու  
քաղց յանձն առած , իրենց ու սիրելաց ոգե-  
պահիկը ճարելու համար հազար տեսակ տա-  
ռապանաց ենթակայ եղած ու տարիներով ի-  
րենց սիրուն ընտանեաց գգուանիքէն զրկված  
· · · · · մէ , ո՞ր ինքնամուլ չայն է այն որուն  
սիրար ի գութ չը շարժի ու անտարբեր աչօք

կարենաց նայիլ իր արենակցացը այս աղեկտուր վիճակին վրայ :

Եթե այսօր ինք անոնց վրայ չը լայ, 'զանոնք չը միսիթարէ, անոնց չ'օգնէ, վաղն իրեն վրայ ալ լացող մը, իրեն օգնող մը, 'զինքը միսիթարօղ մը չը պիտի գտնէ : Ա ան զի իրեն ալ ձաւ կատագիրը մի և նոյն է, ինք ալ մի և նոյն տգիւտութեամբ կուրացած, ու մի և նոյն դժբաղ դութեանց ենթակոյ է :

Այն մարդն որոյ սրտին մէջ գեռ չ'է կորու ված բոլորովին կարեկցութեան սերմը և որոյ սիրու չ'է բոլորովին փակված եղայրսիրական զգացմանց, չը կրնար անտարբեր հանդիսադիր ըլլու այսքան թշուառութեանց ու աղետից և չը կրնար գարման մը չը բնուռել :

Ո՞ն է արգեք այս գարմանը :

Շատ դիւրութեամբ լուծվելու խնդիր մըն է ասի : Վ բնէ արհեստաւոր ու երկրագործ աղդ մը՝ իր ձեռքի արու եստն ու երկրագործութիւնը անալիստանելուն համար թշուառութեան մատնըված՝ ուրիշ կերպով չը կրնար կանգնիլ, բայց միայն նոր քաղաքականութեան պահանջած արուեստներն ու երկրագործութիւնը ձեռք բերելով : Այն ատեն ահա կրնանք հաւասար զօրութեամբ միցիլ մը հողին վրայ օտարուսի ճարտարութեանց՝ արուեստներու և երկրագոր-

ծութեան հետ և մեր բնիկ երկրացի ըլլալուն  
շնորհիւն ի բաց վանել՝ զանտնք . որով և մեր  
ճակտին քրաինքովը մեր հայր գտնել ու ուտել  
այն հողին վրայ ուր այս Կատուածային վճիռք  
տրվեցաւ առաջին մարդուն :

Կոր համար ալ ազգին ընելիքը յայտնի կե-  
ցած է . - Ազգին աղքատ ու խեղճ մասին զաւ-  
կըներն առնել ու պզտիկուց անոնց զանազան  
արհեստներ ու մանաւանդ երկրագործութիւն  
տրվեցնել գիտութեան ընծայած նոր լոյսերուն  
համեմատ . միանդամայն բնուուել գանել ու  
հայթայթել այն միջոցները որոնցմով կարենան  
զբաղել այն արհեստներուն ու երկրագործու-  
թեան և ապրիլ անոնցմով :

Եթէ կարենանք այս արդիւնքը ձեռք բե-  
րել , Ազգին նիւթական վիճակն ու բարսյական  
վիճակը միանդամայն բարելաւած կ'ըլլանք և  
ազգին կեանքը մօտահաս վոանդէ մը աղատած  
կ'ըլլանք :

Ճամանակինիս սուղ և աշխատութիւննիս  
ծանր է : Այսնեկ ժամանակներու մէջ և ասանկ  
գործ մ'ի գլուխ հանելու համար ընդհանուր  
Ազգին բոլոր նիւթական , մօտաւորական ու բա-  
րսյական զօրութիւնները պէտք է միանան ու  
ի մի ձուլմին . նայն խկ հեռաւոր ապագայէ մը  
մութ ու նաեմ ներկային վրայ ցոլացեալ յուաց

Նշոյլներուն առջեւ , յօյս մտաւ որական յառաջ  
դիմութեան և բարեկեցիկ վիճակի մը , իբր խոր-  
շակահար ըյնին անձնական կիրքերը , կուտակ-  
ցութեան ոգին , կրօնական խարութիւնները ,  
և իւրաքանչիւր իր նիւթական ու բարոյական  
լուման բերէ ձգէ ազգային լուսաւորութեան  
դանձանակին մէջ : Եկեղեցականք իրենց կողմէն  
աշխատելով , ազգին ճշմարիտ հովիւներ յարու-  
ցանելով , ըստ առաքելոյն որբոց և այրեաց իր-  
նամածու ըլլալով , սէր քարոզելով ժողովրդին  
և իրենց օրինակով զանոնք առաքինութեան  
կրթելով : Աշխարհականները մոռնալով իրենց  
մէջ երեւան ելած այն հինորեաց անիմաստ  
խարութիւններն որ կամ աստիճանի կամ քաղ-  
քի և կամ կրօնոքի զանազանութենէ յառաջ եւ  
կած են . հարուստ և ուսումնական՝ իւրաքան-  
չիւր իր քանիքարը նուիրելով Ազգին յառաջդի-  
մութեանը համար , և լուսաւորչական ու  
շուռմէական՝ եկեղեցիէն դուրս ձեռք ձեռքի  
տալով ընդհանուրին օգտին համար :

Այս նպատակով և այս սկզբունքներով  
հաստատվեցաւ ահա համազգային ընկերութիւն  
մը ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ անունով :

Այս ընկերութեան հաստատութիւնը բա-  
րի գործէ մ'ալ աւելի , Ազգային հարկաւորու-  
թիւն մըն էր , անհրաժարելի պէտք մըն էր :

Յատերը Վզգին մէջ սկըսած էին զգալ որ  
Երկրին այս ընդհանուր յեղափոխութեանը մէջ,  
շեղափոխութիւն՝ որ ասեին ու վրաց կ'ընէ հին  
կարգերն ու կանոնները և անոնց վրաց հիմնեալ  
ընկերական շենքը, Զայ Վզգին առջեւ նոր և  
ահագին խնդիր մ'երեւան կ'ենէ, կենաց և  
մահու խնդիր մը. կամ ան է որ Վզգին ոթափե-  
րով և հին նախապաշտմանց լուծը թոթվեալ  
ընկերական նոր կեանքի մը մէջ պիտի աճի ու  
զօրանայ կամ բազրովին մեռնի փձանայ: Վը-  
դէն ամեն կողմէն հեծութեան ու շփոթի ձայ-  
ներ կ'ըսկսէին լովիլ ու ամեն կողմէն ընդհա-  
նուր և հիմնական ձար մ'ընելու ետեւէ կ'ը-  
րացիչ ալ ընկերութիւնը հիմնեցին:

1860 Մեպոեմբերի առաջին օրն էր որ ա-  
ռաջին անգամ ժողվրավելով զանազան կրօնքէ  
ու ժ ազգայինք ի դիմաց եռուունի չափ ընկե-  
րաց, 'զանոր հիմնադրութիւնն ըրին որոշելով  
նպատակը և առքեկան բաժնորդագրութեան  
դինը: Ուժ օր եռքը երկրորդ ժողով մ'ըլս-  
լով՝ նախընթաց ժողովին ըրած որոշմանը գոր-  
ծադրութեանը սկըսիլ յանձնաւու եզան ժո-  
ղովականք և բաժնորդագրութիւնն սկըսաւ  
Վզգին մէջ ասոնց ձեռքով: Երրորդ ժողովի մը

մէջ որ գումարեցաւ Աեպտեմբեր 18<sup>ր</sup>օրն ի  
Ռէրա և ուր ներկայ գտվեցան 26 անձնութ,  
կերութեան հիմնական կանոնադրութիւնը  
Յանձնաժողովին մը յանձնըվեցաւ խմբագրել.  
այս Յանձնաժողովը կը բաղկանար հետեւեալ  
անձնացմէ :

Պ. Պ.

Ելշանեան Աերովեէ .


Եղամօն Գրիգոր Լոֆենտի .

Եղամօն Մկրտիչ .

Թագւորեան Աերովեէ .

Ելշմանեան Յովեկի Տօքիւր .

Օսեան Գրիգոր Լոֆենտի :



Կանոնադրութեան յանձնաժողովը ամիս մը  
միջոցի մէջ պատրաստելով իրեն յանձնված  
գործը , Նոկտեմբերի 30<sup>ր</sup> օրը Շնորհանուր Ժո-  
ղով գումարեցաւ Շնկերութեան անդամոց ի  
Ռէրա , և անդ ի ներկայութեան 44 ընկերաց  
կանոնադրութիւնը ընթերցաւ . կանոնադրու-  
թեան ընթերցումը չ'եղած՝ Յանձնաժողովին  
անդամներէն մէկը հետեւեալ ճառը կարդաց  
որ Շնկերութեան նպատակը և կանոնադրու-  
թեան ինչ ինչ յօդուածները կը բացատրէ  
հանդերձ իւրաքանչիւրին պատճառաբանու-  
թեամբը :

Պարոններ :

Երբ հինգ մեց շաբաթ առաջ այս Ընկերութեան քսանուն հինգի շաբ հիմնադիրը մեղի յանձնեցին հիմնական կանոնները շնոր, ամենուն ալ խելքը կը հասնէք որ նոր բան չըկար մեղի հնար բնոր, այլ տեղեկանալոր և ժողովը:

Արեւմնատք՝ ուսկից արեւուն ըլուէն զատ ամեն ըստ կը ծագի յԱրեւելս, երկրագործութեան և արուեստից համար զա նազան բարեգործ ընկերութիւններ հաստատած է, որոնց հետեւիլ հաստատամասութեամբ՝ մեր մի միայն ջանքը պիտի ըլլայ: — Հաստատամասութիւնը՝ որ շատ ազգայինք կ'ուզեն զլանալ իրենց ազգին, մեղի այնպէս կ'երեւայ թէ իր ձիրքերէն էն մ. ծնէ, վասն զի Հայր 4000 տարի է հաստատամասութեամբ ապրեր, իր մը դուն պահեր, և Հայոցի մէջ մի միայն Քրիստոնեայ ազգ մնացեր է մինչեւ ցայսօր և պիտի մնայ:

Ուրեմն այս առաքինսութենէն զուրկ չ'ըլլալով՝ կը մնայ մեղի հետեւիլ Եւրոպից այն ազգաց շատիզներուն, որը որը և անտէր տղզ՝ երկրագործութեան ձրի զպրայնէր բանալրվ, աղքանութիւնը բարեկցիկ կեանքի գարձնելու, մուրացկանութիւնը բանալրւ, տղիսութիւնը համածելու, և ասպականեալ մարդու որ քաղաքներու թանձր մըննորսին մէջ մարմնով ու հոգւով կը թաւալէր, վերանորոգելու համար աշխատեցան գեղեցու մաքուր օգուլ:

Այս գպրոցներուն մէջ տղայք, հողագործին զաւեկներուն պէս կը կըթլին մաքուր բայց խիստ, երկրագործ աշխատութեանց մէջ, մէջ կ կողմէն մարմնները կարովի ու տոկուն կ'ըլլան՝ միւսէն հոգին ու միաբր կը մշակիլին:

Այս գպրոցներուն նպատակը թուլամորթ քաղաքացիներ հրահանգել չ'է, այլ զօրաւոր գործաւորներ հասցնել, որ տոկան աշխատութեանց, չըփախին գործքէ, և որոնց մի միայն երջան կութիւնը՝ իրենց ճակատին քրտինքալը հասած հունձքերուն վայելքն ըլլան:

Ճո՞ն՝ չ' թէ միայն հարկաւոր ուսմանց տեղեկութիւն կը տրվի իրենց, այլ նաեւ արհեստ մը որ առօրեայ հացն ալ իրենց կ'ազահոլէ: Անոր համար մասնաւորապէս կը ջանան աղջ նորեկ զօրութիւնը անով վեաղեցնելու և միայն արտաքրյ կարգի

յարմարութիւն ունեցաղները՝ արհեստից կը պարանդեշնե՞ն՝ և արհեստներէն՝ վանակը կը վերագասե՞ն որ երկրագործութեան աւելի վերաբերութիւն ունին:

Հողի մշակութիւնը մեծամեծ օգուտներ ունի: Եթէ աղոց մարմինը ուժով և առողջ կ'ընէ, մաքերնին կրօնական սկզբանքներով ալ կը զարգարէ: — Տղաք՝ կարգ կանոն չե՞ն հասկապ, երկրագործութեան մէջ ամեն բան կարգ կանոն կը գտնեն: Տղաք թեթևաբարոյ են, երկրագործութիւնը՝ վերենք ուշադիր կ'ընէ, իրենք անհանդեր՝ ամեն բանի պատւզը շուտ փայել կ'ուղեն, բնութիւնը ծանր՝ համբերել կը սովորեցնէ իրենց, իրենք շուտ կը յուսան, բնութիւնը դիմէ՝ վերենք փորձառութեան խոնարհեցնել:

Կրնար երկրագործ աղան գերագոյն պատճառին վայ երկրայիլ: Ստեղծօքը շարունակ իրեն մարքն հետ կը խօսի, իրեն երեւակայութիւնը կը գրգէ, ամեն վարդիկան երկնաւոր ձեւքն է: որ արգասարեր անձմեւը կը պարզեւէ կամ բաղմակառ կարկուտը կ'արձակէ:

Նախահնամնութեան վճիռ է, որ աշխատութիւնը որ ամենահարկաւորն է մարգում՝ ըլլաց բարցականի գաս մը իրեն և հանդիսան ու կանոնասար կեանքի մը և երջանկութեան աղյութը:

Ահա այս աւեակ գարցոցի նկարագիր մը մեր ամենուս մարքն մէջ յեղյեղելով, Բարեգործական անունէն աւելի շատերուն թեթևու Երկրագործական անունը նախագասելի կ'երեւար և ամենարոշ, բայց մնաք Բարեգործական անունը տալով Ընկը բաւութեան՝ ուղյունք:

Ա. Հանու զիտաւորութիւնը հեռացնել.

Բ. Արաւեսաները՝ երկրագործութեան ընկերութիւնն զուր ընետել:

Գանք Ընկերութեան գործոց վարչութեանը:

Յայոնի է որ զանազն ժողովներ և՝ զանոնը կազմելու համար բաղմանութիւն անձանց աւելի արգելք կ'ըլլան շատ անգամ գործելու, մանաւանդ թէ գործ մը հասուատելու և առաջ տանելու: անոր համար ալ Եւրոպից ընկերութեանց մէծ մասը կը տեսնենք որ գործոց վարչութիւնը մէկ կամ սակաւութիւն անձանց ձեւքն է յանձնած: և պատմութիւնն ալ մեզի վկայ է՝ որ ոչնչ խնդիրներ մեծամեծ և պասակար տարածայնութեանց պատճառ ըլլալը՝ հմտ ուր միութիւն պէտք էր գործին առաջ Երթալուն՝ արգելք և մահ բերեր են: Այս բանիս օրին:

հակներն աչքերնուս առջեւ ունենալով, վարչութեան համար մէկ ժողով մը միայն ընդունեցինք և այն ալ հինգ հոգիեւ բաղկացած: Կրնայ մէկը մէզի առարկեւ, թէ ինչո՞ւ հինգ հոգւոյ յանձնելու տեղ՝ մէկ հոգւոյ միայն ըսյանձնեցինք վարչութիւնը: — Թէ որ զեզման երկիւղը չ'ունենայինք՝ անշոշու մէկ հոգւոյ մը կը յանձնէնք ամեն բան, որպէս զի տարածայնութիւն, վէճ, գանգաղութիւն և հետեւաբար անդորթութիւն, որ ժողովներու յանցանքն եղած է, մեր բաժինը չ'ըլլար, բայց դարձեալ կը կրկնենք՝ մարդուս ընական զեզման ննթակայ ըլլար մէզ վախցաց և հինգ հոգւոյ յանձնեցինք մէկ մարդու մը ընկերը: Եւ որպէս զի ասանց ընտրութիւնն ալ հասողութեամբ և ընտրելը անձանց քաջ ծանօթութեամբ ըլլայ, ընդհանուր քուէարկութիւնը հիմն ամեն ընտրութեան ընդունելուն եռըլ, Տնօրին ժաղովին ընտրութիւնը անուղղակի ձեւով ընել մէզի օգտակար և անհրաժեշտ թաւեցաւ, սյսմիքն Ընկերութեան ընդհանուր ժաղովը գաղովը գաղանի քուէարկութեամբ 20 հոգի զատէ իր մէջէն, և այն քան հոգին ընտրեն Տնօրին ժաղովին անդամները: Այս պատմառներուն համար էր գարձեալ, որ Տնօրին ժաղովին կանոնները՝ իրեն յանձնեցինք շնելու դուծագրել: Թէ որ այս գործի ժաղովը ինելոր կանոններով կապէինք կաշկանդէինք, անդամացած ժողով մը պիտի ունենայինք: Վէրջապէս՝ ձեւը ընտրութիւնն ելլելու մարդիկը խոհեմ, ազգամէր և բարեկամ հաւատարով և ամեն կանոն իրենց խոշնդրուն համարելով, առանց զիրենիք ճանձնալու, վասն զի ներկայ քուէարկութիւնը մէզի անմիք պիտի ճանցնէն, կատարեալ վասահութիւն ունեցանք իրենց վրայ, որպէս առեւ մէզի անկարելի է հաւատալ, թէ երբ առանց շահու, մէծ ու պատիկ, գիտան և անդէս, հարուստ ու չքաւոր, եկեղեցական և աշխարհական մէկուղ կու գան, առանց կրօնի խորութեան, առանց կարծեաց զանազանութեան՝ մէկ առէկ գործ մը կատարելու համար, սյսմիքն նեղ ժամանակիս իրենց քառակը բանալով, մէզի անկարելի կերեւայ, կըսէնք, որ գէշ ընտրութիւն մը կարենան ընել թէ և ուղեն նէ ալ, նայնակէս մէզի անկարելի կերեւայ, որ հինգ հոգի աղէկ ճանհցըված համարմունքի արժանի մարդիկ, հետաման այս սուրբ նախառակէն, վասնեն այս նուիրական արծաթը չութեամբ, անփսէլքութեամբ կամ շահասպատթեամբ:

Այս ճառէն ետքը Կանոնադրութեան ընթերցումն ու յօդուած առ յօդուած քննութիւնն ըլլալով մէկ քանի փոփոխութեամբ որ առ ժամին կատարվեցան ընդունվեցաւ և ըստորագրվեցաւ Շնդհանուր Ժողովն։ Իսկ Կանոնադրութեան համեմատ Շնդհանուր Ժողովը դիւանին և Տնօրէն Ժողովը ընտրութեան համար պահանջված 20 անձանց ընարութիւնն ընելու համար Նյեմքերի 13<sup>ր</sup> օրը՝ երկրորդ Շնդհանուր Ժողովը մ'ընել որոշվեցաւ։

Աւասիկ Շնկերութեան Հիմնական Կանոնադրութիւններ.

### ՀՈԴՈՒԱԾ ԿԱՆՈՆԵԳՐՈՒԹԻՒՆ

#### ՅՈԴՈՒԱԾ Ա.

Բարեգործական Ընկերութեան նպատակն է, Ազգին որբ, անտէր և չքաւոր տվայքը Երկրագործութեան և արուեստից զրագեցնելու միջնուելն ի գործ դնել։

#### ՅՈԴՈՒԱԾ Բ.

Ընկերութեան անդամն է ամեն չայազգին որ տարեկան բաժին մը կը վճարէ։

#### ՅՈԴՈՒԱԾ Գ.

Մէկ բաժինը տարին մէկ Օսմանեան մը աւել լի բաժին կրնայ գրվիւ։

#### ՅՈԴՈՒԱԾ Դ.

Ընկերութեան անդամն մը որ տարեկան բաժինը վճարելէն կը դարբի, Ընկերութեան մասնակցութենէն կը դրկվի։

#### ՅՈԴՈՒԱԾ Ե.

Ընկերութեան անդամոց մէկուղ գալովը կը ձեւանոյ Շնդհանուր Ժողովը։

= 22 =

ՅՈՒԹԱԾ Զ.

Ընդհանուր Ժողովը՝ Տնօրէն Ժողովի մը կը յանձնէ Ընկերութեան գործոց վարչութիւնը :

ՅՈՒԹԱԾ Է.

Տնօրէն Ժողովին պաշտօնն է սասակ հաւաքելու միջոցները հախայնել, հետզետէ հաւաքած սասակը Ընկերութեան նպատակին ծառայեցնել, և վերջապէս՝ զանկերութիւնը շրւտով ու ապահով կերպով իր նպատակին հասցնելու համար ամեն հնարդ ի գործ դնել:

ՅՈՒԹԱԾ Ը.

Տնօրէն Ժողովը կը բաղկանայ հինգ հոգիէ, որոնք Ընկերութեան անդամոց մէջն պիտի ընտրըլին :

ՅՈՒԹԱԾ Թ.

Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ Տնօրէն Ժողովին անդամները անսուղակի ընտրութեան ձեւով :

Այսինքն՝ Ընդհանուր Ժողովը գաղանի քուէարկութեամբ իր մէջն 20 հոգի կ'ընտրէ, որոնք գարձեալ գաղանի քուէարկութեամբ՝ Տնօրէն Ժողովին անդամները կ'ընտրեն :

ՅՈՒԹԱԾ Ժ.

Տնօրէն Ժողովը մինչեւ հինգ տարի անփայտմակիլ է. հինգ տարիէն ետքը Ընդհանուր Ժողով կը գումարվի, որ իր բոլոր անդամներուն բացարձակ բաղմնութեամբը կ'սորչէ Տնօրէն Ժողովին փափոխութիւնը :

Երբ Տնօրէն Ժողովը փախվելու ըլլայ, նախորդ Տնօրէն Ժողովին անդամներէն մէկը գոնէ՝ յաջորդ Ժողովին մէջ պիտի մնայ, նախորդ Տնօրէն Ժողովին ընտրութեամբը :

ՅՈՒԹԱԾ ԺԱ.

Երբ Տնօրէն Ժողովին անդամներէն մէկը պակսի կամ հրաժարի, Տնօրէն Ժողովը երեք հոգի կ'առաջարկէ որոնց մէջն մէկը կ'ընտրէ Ընդհանուր Ժողովը ըստ Թ. յօդուածին :

ՅՈՒԹԱԾ ԺԲ.

Տնօրէն Ժողովը իր ներքին վարչութեան կանոնները ինք կ'որոշէ ու կը գործադրէ :

ՅՈՒԹԱԾ ԺԴ.

Տնօրէն Ժողովը տարին անգամ մը Ընկերութեան գործոց  
վիճակին վւայ տեղեկադիր պիտի ուսց Ընդհանուր Ժողովին :

ՅՈՒԹԱԾ ԺԴ.

Տնօրէն Ժողովը կը գումարէ զԸնդհանուր Ժողովը :

ՅՈՒԹԱԾ ԺԵ.

Ընդհանուր Ժողովը կը գումարի :

Ա. Տնօրէն Ժողովին տարեկան տեղեկադիրը մոփիկ Ընելու  
համար :

Բ. Տնօրէն Ժողովի անդամնց ընտրութեանը համար :

Գ. Հիմնական Կանոնադրութեան վերաբենութեանը համար :

ՅՈՒԹԱԾ ԺԶ.

Ընդհանուր Ժողովին գումարումը ամիս մը առաջ Տնօրէն  
Ժողովը պէտք է ծանուցանէ օրագրի միջոցաւ, օրն ու տեղը  
նշանակելով :

ՅՈՒԹԱԾ ԺԷ.

Ընդհանուր Ժողովը մէկ Առենապետի, մէկ Առենապետի  
Փոխանորդ, մէկ Առենադպիր և մէկ Առենադպիր Փոխանորդ  
պիտի ունենայ, որնք կը կազմեն Ընդհանուր Ժողովին գիւանը :

Ընդհանուր Ժողովին գիւանը օ տարին անգամ մը Տնօրէն  
Ժողովին հետ փափաթելի է :

ՅՈՒԹԱԾ ԺԸ.

Ընդհանուր Ժողովը որոշում մը Ընելու համար պէտք է որ  
Ընկերութեան անդամնց կէսէն աւելին ներկայ ըլլայ :

ՅՈՒԹԱԾ ԺԹ.

Ընդհանուր Ժողովին մէջ ամեն որոշում ներկայ գտնիող  
անդամներուն մեծագոյն մասին հաւատութեամբը կը լլայ :

ՅՈՒԹԱԾ Ի.

Երբ Ընդհանուր Ժողովին մեծագոյն մասը ներկայ չ'ըլլայ,  
եթէ տարեկան տեղեկադիրը կարդալու համար գումարված է,  
Տնօրէն Ժողովը ներկայ եղանակուն առջեւ կը կարդայ իր տեղեկադիրը . եթէ ընտրութեան կամ կանոնադրութեան վերաբենութեանը վրայ ըլլայ խնդիրը, ներկայ եղանակը իրենց քուեն  
տարէն ետեւ՝ ներկայ չ'եղանակուն ալ քուեն դրու կ'ուզիլ ու  
էն քիչը շարաթ մը ժամանակէն ետեւ ըստ օրինի քուեհամա-

ու կ'ըլլայ Ընդհանուր Ժողովի դիւնելին միջնորդութեամբը ու  
Տնօրէն Ժողովին ներկայութեամբ :

ՅՕԴՈՒԱԾ ԻԱ. ԵՒ ՎԵՐՋԻՆ

Ներկայ Հիմնական Կանոնագրութիւնը Ընկերութեան Ընդհանուր Ժողովը ընդունելէն ու ասորագրութիւն ետեւ : անփափոխ իւլի է նաեւ Ընդհանուր Ժողովին կողմէն : Խոկ եթէ գործադրութեամբ մէջ Տնօրէն Ժողովը ինչ ինչ յօդուածներու փոփոխութիւնը հարկաւոր դատէ : Ընդհանուր Ժողովին կը դիմէ և անոր հաւանութիւնը առնելէն ետքը պէտք եղած փոփոխութիւնները կ'ընէ :

Ընդունված Ընդհանուր Ժողովով : 1860 Հոկտեմբեր 50:

Նյեմբեր 13<sup>ր</sup> օրը դումարված Ընդհանուր Ժողովին ներկայ էին միայն 75 ընկերք . այս ժիւը բոլոր Ընկերութեան անդամոց մեծադոյն մասը ըստ ներկայացնելով՝ Կանոնագրութեան 20<sup>ր</sup> յօդուածին համեմատ քուէարիութիւնը նցն օրը սկսելով 14 օրի չափ բաց ձգվեցաւ ու Նյեմբերի 27<sup>ր</sup> օրը 43 ընկերաց ներկայութեանը և Կանոնագրութեան Յանձնաժողովին ու մի միայն այս պարագային համար ընտրեալ 4 քննիչներու միջնորդութեամբ քըւէհամարը կատարվեցաւ , որոյ համեմատ Ընդհանուր Ժողովը դիւնելին անդամ ընտրված եղան ,

Պ Ա Պ Ա

Ազաթօն Գրիգոր Եֆէնտի Աստիապետ  
Օտեան Գրիգոր Եֆէնտի Աստիապետի Քոյսանորդ  
Պէշիրթաշլեան Ակրտիչ Աստիապետի Քոյսանորդ  
Եռուստթեան Տիգրան Աստիապետի Քոյսանորդ

Եւ Տնօրէն Ժողովին ընտրող

Պ Ա Պ Ա

Ալիշան Աերովեէ .

Աղաթօն Գրիգոր Ղֆէնտի .

Աղաթօն Մկրտիչ .

Եռւսուֆեան Տիգրան .

Եսայեան Թռովմաս .

Թագւորեան Աերովեէ .

Հեքիմեան Արապիոն .

Մինասեան Մինաս Ղֆէնտի .

Միւհէնտիսեան Մարտիրոս .

Միւհէնտիսեան Մկրտիչ .

Շիշմանեան Յովսէփ Տօրթօր .

Շիշմանեան Պօղոս .

Պէշիքթաշլեան Մկրտիչ .

Պէտան Պէտ .

Սաբրզլեան Յովհաննէս Ղֆէնտի .

Սըվաճեան Յարութիւն .

Վարդան Բաշա .

Տավութեան Յակոբ Տօրթօր .

Փէշտիմալճեան Մահակ .

Օտեան Գրիգոր Ղֆէնտի .

Այն ընտրօղները դեկտեմբերի 14<sup>ր</sup> օրը գույ  
մարտին լուլ ի Բէրա գաղանի քուէարկութեամբ  
և մեծագոյն մասին հաւանակամբն ընտրե-  
ցին Տնօրէն Ժողովոյ անդամ՝ հետեւեալ ան-  
ձինքը .

Պէ Պէ

Աղաթօն Գրիգոր Եֆէնտի .

Թագւորեան Մերտվել .

Աիւհէնտիսեան Մկրտիչ .

Ըշմանեան Յովսէփ Տօքլթօր .

Օտեան Գրիգոր Եֆէնտի .

Որով Շնդհանուր Ժողովոյ Առենապետն ու  
 Առենապետի փոխանորդը միանգամայն Տնօրէն  
 Ժողովոյ անդամ՝ ընտրըված գանցվելով՝ իրենց  
 առաջին պաշտօնէն հրաժարական տալու պար-  
 տաւորեցան և Յունվարի 18<sup>ր</sup> օրը Շնդհանուր  
 Ժողով գումարվելով՝ իրենց տեղը ընարվեցան,  
 Շնդհանուր Ժողովոյ գիւտանին անդամ

Պէ Պէ

Աղաթօն Մկրտիչ .

Պէտան Պէտ .

Արենապետ

Վարչապետի Դուռանդութեան


Այս հակիրճ պատմութենէն կը տեսնի որ  
 Շնկերութիւնն իր հաստատութեանը և կազ-  
 մութեանը վերաբերեալ աշխատութիւնները  
 ըլնցուցած ու իր ընթացքին ապահով կեր-  
 պով շարունակութեանը և ձեռնարկութեանն  
 յաջողութեանը համար պէտք եղած խնամա-  
 ծութիւնը Տնօրէն Ժողովին յանձնած է :

Շնկերութիւնը վստահ է որ կամաց կամաց  
 Եղին բոլոր մասերէն ու ամեն կողմէ հաջոյ-

քավ պիտի գան բազմացնելու զօրացնել՝ զինքը  
ամեն ճշմարիտ չայու սիրա կրօղ ազգայինք,  
արք և կանայք, եկեղեցականք և աշխարհա-  
կանք, ի Պօլիս և մինչեւ էն հեռաւոր երկիր-  
ներէն ուր չայու զաւակ կը դանվի: Ծնկե-  
րութիւնը վատահ է դարձեալ որ այս քրիստո-  
նէական ու մարդասիրական գործին հաշտ ա-  
կամք պիտի նային ամեն կողմի և ամեն քաղա-  
քականութեան ծառայօղ անձննք, զի բարե-  
դործութիւնը և ոչ մէկուն շահին կրնայ վեա-  
սէլ և հաստատ յցս ունի որ (Օ)սմանեան բարե-  
սէր տէրութեան հովանաւորութեանը ներքեւ  
և ազգասիրաց ակլմբին համակրութիւնն իրեն  
վահան ու զօրավիր ունենալով՝ անարդել պիտի  
կրնայ իր ընթացքը շարունակել:

Եւ վերջապէս Ծնկերութիւնը առ Աստուած  
կ'ապաւինի իր ձեռնարկած գործն ի գլուխ հա-  
նելու համար, զի Աստուած կը համի այս գոր-  
ծին և իր ամենազօր Աջովը պահապան կ'ըլլայ  
ասանկ ձեռնարկութեան մը որ աղքատին մըշ-  
տընջենաւոր հայ ճարելու և անկեալին ձեռք  
կարկառելու սուրբ նորատակն ունի, և որոյ  
նշանաբանն է

**ՍԵՐ ԵՒ ՄԻՌՆԹԻԿՆ**



Հասարակաց դիւրութեան համար հարկ  
կը համարինք հրատարակել հոս այն անձանց ա-  
նունները որք ազգասիրաբար յանձնառու եղան  
ընկերագրութեան հսկելու խնամք տանիլ։

Պէ Պէ

Ալթունձեան Համբարձում.

Աղաթօն Մկրտիչ.

Արշակ Յակովլոս.

Դրձեան Յովհաննէս.

Երկանեան Նիկողոս.

Եսայեան Թովմաս.

Եռուսուֆեան Տիգրան.

Խուրտաձեան Գրիգոր.

Կիւմիւշեան Խաչիկ.

Կիւմիւշիւրտանեան Ռուբէն.

Կոճիկեան Ընդրանիկ Փէյ.

Հովիւեան Յովհաննէս.

Շվահիւրձեան Լզիազար.

Սիւհէնտիսեան Մարտիրոս.

Նէվահիւրձեան Յղիազար.

Նուրեան Յովհաննէս Իգիէնտի.

Շահանեան Օքսէն.

Պէյլիւրձեան Շանիկ.

Պէշիրթաշլեան Մկրտիչ.

Պէտան Պէյ.

Պուրունառազեան Յակոբ .

Ասդըղեան Յովհաննէս Եփէնտի .

Ասմանձեան Աղքատիչ .

Արվաճեան Յարութիւն .

Տավութեան Յակոբ Տօրթօռ .

Փէշախմաղձեան Աահակ .

Օտեան Նշան :

Ուզողը՝ թէ այս անձանց և թէ Տնօրին  
Ճողովին անդամնց ձեռքով կրնայ ընկեր գրվել :

## ՅԱՐԵՎԱՆԻ ԱՐԵՎՈՅ

Ղարեգործական Ծնկերութեան նոր հաստատված ժամանակը, Ազգային օրագիր մը դեռղութիւն մ՝ ըրած էր, եկեղեցականաց՝ Ծնկերութեան մէջ ընդունվելուն դէմ։ Այս դեռղութիւնը Ծնկերութեան ոգւյն հակառակ ըլլալով, կանոնադրութեան Յանձնաժողովը փութաց իր անդամներէն երկուքին ստորագրութեամբը նամակ մը հրատարակել տալ նոյն օրագրին մէջ, ի բժշկութիւն գայթակղեալ մտաց։ Անօգուտ չ'ենք համարիր հոս գնել այն նամակը, ինչպէս նաեւ կանոնադրութեան Յանձնաժողովին անդամներէն մէկ ուրիշին ետքէն իր կողմէն գրած մէկ նամակը մի և նոյն նիւթին վրայ։

17 Հոկտեմբեր 4860 Կ. Գոլիս.

Մեծարգոյ խմբագիր,

Զեր լրագրոյն 452 թույն մէջ նորահաստատ Բարեգործական Ծնկերութեան վրայ խօսելով՝ քանի մը տեղեկութիւն տալ եւ քանի մը խորհրդ ածութիւն ընել հարկաւոր սեպեր էիք։ Նոյն գրութեան մէջ կ'աւելցնելիք նաեւ, աւելի ճշգր ու ընդարձակ տեղեկութիւններու պէտք ունենալիք։

Ուստի պարագ կը համարինք զիտցնել թէ « Քարեգործական Ծնկերութեան նպատակն» և՝ Ազգին որբ, անտէր ու չքառորդ երկրագործութեան ու արուեստից զբաղեցընելու։

Կոյնպէս զիտութեան արժանի է թէ Ծնկերութեան առաջարկութիւնը ոչ ի չուսմէ ական չայց առ Լուսաւորչուկանս եղած է և ոչ ի Լուսաւորչուկանաց առ չուսմէ ականս։ Վասըն զի այս Ծնկերութեան հիմնագիրները չայ են միայն և ի ընդ կրօնական պարագը ու խորհմանկին հաշիւը իրենց Առ-

տուծոյն տալեն վերջը , Եկեղեցիէ գուրս ամենեւին կրօնիքի  
խնդիր և խոիր չ'են յարուցաներ : Իրենք աղէկ համոզված  
են , թէ ասկէ վերջը Ազգին մէջ եղած կրօնական բաժանմանը .  
Ները կան և պիտի մասն . անոր համար աշ անկարելի միութեան  
խնդիրը յարուցանելու ոչ կամք և ոչ փափաք ունին : Բայց ի-  
րենց համար սուրբ սկզբունք մըն է

Ա. Զ. Գ. Ո. Ւ. Թ. Ի. Կ. Բ.

Եւ սրբազն պարոք մըն է առ նոյն Ազգը

Բ. Ա. Տ. Գ. Ո. Ւ. Ծ. Ո. Ւ. Թ. Ի. Կ. Բ. :

Այսր համար աշ , Յարգոյ խմբագիր , այս Ընկերութեան  
հիմնագիրը ոչ երկառ , երկը , տասը կամ յիսուն հոգի են , այլ  
Ազգին այն ամեն անհամներն են որ առ անց կրօնի խորութեան  
կու գան կը միանան բարի գործ մը ընելու համար , հաց ձարե-  
լու Ազգին անօթի զաւկըներուն , հայր ձարելու սրբերուն ,  
մոքի մնանելու տգէտներուն , ապագայ մը անտէրներուն :

Ուստի այսպիսի նպատակ ունեցող գործի մը առջեւ , մէր  
և մէր բոլոր ընկերներուն փափաքը այն է որ լուն ամեն ան-  
սկ բեմի վէճեր և բաժանման առիջներ , վասն զի՞ մէր ամե-  
նուն ալ կրօնական կուխներուն մէջ նաև՝ իմաստուն բարեգոր-  
ծութիւնը քարոզված է միշտ անխորի ամեն քրիստոնեայ բե-  
մերուն վրայէն :

Իսկ ձեր վերջի գիտալութեան առ կը պատասխանէկ :

Ս. Ն. ճ նախամինք ըրած կ'ըլլացինք Քրիստոնէութեան և,  
Ընդհանուր Ազգին և ծանր վէրք մը տուած կ'ըլլացինք անխոր-  
տիք ամեն եկեղեցականաց , իրենց մէկ քանիին ոխալմանցը հա-  
մար՝ բարը և կեղեցական մարմնը ևթէ ուզէնիք ի բաց մէր-  
ժել : Քահանան՝ առաքելոց յաջրտքը , Քրիստոսի փոխանորդը ,  
երբ իր սաշատնը արքանապէս կը կատարէ , հրեշտակ մըն է  
մեղի համար , և երբ մնիք սէրը սիրոք , խաղաղութիւնը բերանը ,  
գիտութիւնը ճակատը կուգայ մեղիք և մէր սուրբ գործին օք-  
նութեան ձեռք կը կարկառէ , մէնք սյդ ձեռքը յարգանօք  
մէր ճակատը կը տանինք : Վասն զի՞ մէնիք հաւոսացեր ենք  
միամիտ պատի . թէ , ընդհանուր Ազգին զանազան եկեղեցական .  
քը աղէկ համոզված են որ իրենց ժողովրդոց սիրելի և պատ-  
կառելի ըլլալու համար , իրենց երկնաւոր վարդապէտին հրամա-  
նոր պէտք է անհրաժեշտ կատարեն “ Ճրագլ աշտանակի վլայ  
հանելով և ոչ զրուանի տակ ծածկելով ” :

Ընդունեցէք , յարգոյ խմբագիր , մէր յարգանաց հաւասովիք :

Ա. Աղավեն : Յովեն Շնմանեան :

Չեր պատուական լրագրոյն հօն թռուայն մէջ, մէծապատիւ Ազա Յ. Պականին՝ Բարեգործական Ընկերութեան առժով գրած համակը շնորհակալութեամբ և ուրախութեամբ սրտի կարդացի: Կայն նամակին մէջ յարգոյ հեղինակը կասկած կը ցուցնէ թէ Եկեղեցականք՝ Աշխարհականաց համեմատ անխափի ոգւով իրենց աղջայնոց բարերարելու եւանդը չ'ունենան: Ասոր գէմ՝ զլուցելու քանի մը խօսիք ունենալովին, նախ անօր խորհրդածութիւնները կը գնենք հոս։ և հետեւաբար մերինները կ'առարկենք բացայսյու և որոշ հասկցվելու համար: «Դիցուք թէ, կ'ըսէ գրցն հեղինակը, աշխարհականներէն անոնք միայն անդամ գրիլն ընկերութեան, որոնք այս անխառութեան ողին ունին կամ անիէ չ'են խորշիր, բայց նյոյ կարծիքը կը նաև ունենալ առհասարակ բոլոր եկեղեցականաց համար ալ»:

Կը պատասխանեմ նախ՝ թէ ի՞նչու, այս անխառութեան ոգին թէ և աշխարհականաց մէկ մասին մէջ գտնենք, բոլոր աշխարհականները առ հասարակ առանց հարցուփարձի արժունի կը գտնենք ընկերութեան անդամակից ըլլալու, և ըսէ անշառութեամբ բոլոր եկեղեցականներէն կը պահանջնենք այս անխառութիւնը՝ անոնցմէ զլմանս ապահովագէս ընդունելի ընելու համար մեր ընկերութեան մէջ, մէնք կը կարծենք թէ աւելի բանաւոր և իրաւացիք է ըսել թէ ու իցէ հայ մարդ, եկեղեցական և աշխարհական, ընկերութեան կանոնները ընդունելէն վերջը տէր է անոր անդամակից ըլլալու, բաւական է որ ննքը յօժարամիտ ըլլայ այսպիսի բարեգործ ձեռնարկութեան մը նպաստելու, և այս առանց վոսնդ մը պատճառելու ընկերութեան և «Բայց, կ'ըսէ, (Եկեղեցականք) յայսնի անխառութեան սկզբանը կրնան ծառացել առանց իրենց յատուկ սկզբանը վասակը, և եթէ ծառացեն՝ միթէ անծինի իշխանութեամբ է թէ արտօնութեամբ, և այս արտօնութիւնը ուսկից ո: Ի՞նչու, կ'ըսենք, իրենց յատուկ սկզբանը կը վընասն երբ ձեռնառուութիւն կ'ընեն ընկերութեան մը, որ ատոք հունձ, կամ աղնիւ պատղաստ ծառեր, կամ արհեստից մէջ գործածելի զանալան փայտեր, արմաններ, տօւնկեր հասցընով, և բանձարէ կամ օրոշեց շաքար ցնօղ մարգիներ պատրաստելու նպատակն ունի, արդեք եկեղեցականք նախանձոր գութիւն մը ունին աշխարհականաց հետ այս առատութիւններուն մէջ: Դարձնեալ, որ եկեղեցական իշխանութիւնն է որ

այսպիսի ընկերութեան համակրութիւն աւնեցող եկեղեցականը  
դատապարտէ , կամ արգիլէ որ այսպիսի համակրութիւն չ'ունեց  
նայ , միթէ ըլլարին կամ 'զանմասը սիրելու համար հարկ կոյ  
արտօնութիւն աւնենալու : Ես թէ որ չայ կամ հաթովիկ հայ  
եկեղեցական մը ըլլայի , ոչ միայն հայոց կամ 'կաթովիկ հայոց  
մէջ գտնիրված այսպիսի ընկերութեան իմ նպաստու կը մօտուցանէի , այլ նաև ուրիշ ազգաց մէջ եղածին ալ՝ իմ ձեռքէս  
եկածին չափ և այն ազգին աւնեցած համակրութեանս համեմատ օգնութիւն կ'ընէի , և այս առանց իմ ոկղուանց վնասելոյ ամենասփառ խղճմանին ալ աւնենալու , կամ ասոր համար արտօնութիւն մը առանալու հարկաւորութիւնն զգալու : — Յէ  
որ ազգին իւրաքանչիւր մասին եկեղեցականները՝ իրենց պաշտօնէն թելսագրեալ խորութիւն կ'ընեն նէ երկու ժողովրդեան մէջ , ասի յայտնի է թէ միայն կրօնական խնդիրներու մէջ է , և անհաւատավի է ըստ , թէ իրենց մայեւանցութիւնը այն աստիճանի ասատիկ ըլլայ՝ որ այս ժաղավորքեան եկեղեցականը , սսկապէս ասուաց բարութիւնը զանայ այն ժաղավորքեան , կամ աւելի պարզ խօսելով , այս ժաղավորքեան եկեղեցականը փափաքի որ միւս ժաղավորքը տղէտ , աղքատ և թշուառ մը նայ , 'զայս հաւատու անտանելի է : — Երկրորդ , թէ և եկեղեցականը պատվիսի զզուելի գաղափարի տէր ալ կրնան ըլլալ , 'զոր երեք չ'ենի հաւատար , մը ընկերութեան նպատակը ամենեւին յարաբերութիւն մը չ'ունենալով անոնց գիտութեանը հետ , անկարելի կամ խիստ գժւարին է իրենց որ այս ընկերութեան գործոց անօրէնութեանը մէջ կարենան պաշտօն մը հետեւապէս անոր տիրապէտելու կամ վնասելու աւիժ մը ունենալ , թող թէ , մը երկրագործ և արհեստաւոր աշկերոր մէր գասարանները ընկունվելէն առաջ սորված պիտի ըլլայ իր կրօնիքն ուսմունքը իրաւանց չափովը քուլ : Զուսկ յետոյ , հեղմակը չաղանթովին չամազգեաց ընկերութեան գժեարդ գէպը ի մէջ ըերելով՝ կը փափաքի որ այս նորահաստատ ընկերութեան հիմնադիրքը աւելի զգոյշ և խորագէտ ըլլան այն հզօր և իր օգուտալ վնասող եկեղեցապէտութեան հնարիցը գէմ : Մենք չամազգեաց ընկերութեան վրայ հօս երկան բարակ խօսիլ չ'ենթառ գեր . բայց յակամայ երկու խօսք կը զբուցնիք , կարծելով թէ կարենանք այս երկու ընկերութեանց թէ նպատակին և թէ կազմութեան մէջ եղած տարբերութիւնը ցուցնել , որով և փարատել այն մնատի երկիւղը 'զոր հեղմա-

կին վերացիշեալ խորհրդածութիւնները կրնան սժանց մաքին  
մէջ յղանալ ։ Համազգեաց ընկերութիւնը նպատակ ունեէր  
քաղաքներու ։ աւաններու ։ գիւղերու ։ մէջ նախնական գորոց-  
ներ կառուցանել պղտիկ տղաց թէ հոգեւոր եւ թէ արտաքին  
գիտութիւններ սորվեցնելու ։ Համազգեաց ընկերութիւնը կա-  
նան մը ուներ նուիրական ։ որուն մէկ տառը խիստ անընդգի-  
մագրելի փաստերը նաեւ չ'են կարող տեղեն շարժելու ։ չ'ը  
կրնար փոխել իր նպատակը ։ եւ նախապատրաստական գորոց-  
ներու տեղ՝ չափահաս և իր հոգեւոր և սկզբնական ուս-  
մունքը սորված աշեկերտներու համար սահմաննեալ բարձրա-  
գոյն և արտաքին գիտութեանց վարժարաններ բանալ ։ չ'ը  
կրնար գործեալ նպատակը պահելով իր կանոններուն մէկ յօդ-  
ուածը փոխել և պղտիկ տղաց հոգեւոր ուսումնց հոգը անենց  
հաւատու որոնց կը վերաբերի ։ Մէնք ոչ այսպիսի կանոն ու-  
նինք և ոչ այսպիսի նպատակ ։ այս երկու ընկերութեանց մէջ  
իր մը շրկայ որ երկուքին հասարակ ըլլայ ։ ուրիմն այս երկու  
մարմիններուն կազմուածքը անհամեմատ տարբեր է մէկզմէկէ և  
և թէ որ Համազգեաց ընկերութիւնը շրկցաւ տղիկ այն  
աթքերաց մէջ մնեք շատ յօյս ունինք ։ որ Բարեգործական ըն-  
կերութիւնը հմտ մէծ մնունդ առնու զարգանայ ։ եւ գուցէ  
մէր փափաքը անակնկալ կերպով վարժարէ ։

Ուէ որ այս գրածիս նիւթ եղող նամակին արդոյ հեղինա-  
կը և անոր հեա զիս կարդացող սիրելի աղքայինք վերագրեալ  
առարկութիւններէս համոզվեցան ։ կը մնայ հեղինակին իր  
ճարտար գրիչը գարձնել ի հրաւեէր սնդուահակցութեան այս  
աղքոգուա ընկերութեանս առ իր պատուական աղք այինները ։  
և աղքայնց այ ունենալ մէր և ջանք ի բազմացուցանել ասոր  
անդամներուն թիւը ։

Բարեհաձեցէք յարգամեծար տէր ։ տեղի մը շնորհել այս  
գրութեանս ձեր պատուական լրագրոյն էջերէն մէկին մէջ ։

ՑՈՒՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ՄԻՒԶԵՒ 1860 Ի ՎԵՐՋԸ

Պէ Պէ		ԲԱԺԻՆ
Եղարեան Յովլէփ	· · · · ·	1
Եղարեան Ստեփան Վարդապետ	· ·	1
Եզնաւոր Մերոբէ	· · · · ·	1
Ելաճաճեան Յակոբ	· · · · ·	1
Ելաճաճեան Պետրոս	· · · · ·	1
Ելանեան Յարութիւն	· · · · ·	1
Ելթուն Լժիշնտի	· · · · ·	1
Ելթունեան Արթարի	· · · · ·	2
Ելթունճեան Համբարձում	· · · · ·	1
Ելեանագեան Խաչատուր	· · · · ·	1
Ելիշան Միքայէլ	· · · · ·	1
Ելիշան Մերոբէ	· · · · ·	1
Ելիշան Վիշէն	· · · · ·	1
Եմիկեան Մերկեր	· · · · ·	1
Եղաթօն Գրիգոր Լժիշնտի	· · · · ·	1
Եղաթօն Միքայէլ	· · · · ·	1
Եղաթօն Մկրտիչ	· · · · ·	1
Եղաթօն Յովհաննէս	· · · · ·	1
Եղաթօն Ներտառ Տիկին	· · · · ·	1
Եղաթօն Սօֆիկ Տիկին	· · · · ·	1
Երվատեան Մատթէոս	· · · · ·	1
Երվատեան Մեսրոպ	· · · · ·	1

		23
Ըստընեան Գէորգ . . . . .		1
Ըստիմեան Եսայի . . . . .		1
Ծնան Ոկրտիչ . . . . .		2
Ծնան Պօղոս . . . . .		1
— պատուլսահ Անքայէլ Եփենտի . . . . .		2
պատուլսահ Գէորգ . . . . .		1
պատուլսահ Պետրոս . . . . .		1
պատուլսահ Վ իշեն . . . . .		1
պրօ Ընտօն . . . . .		2
պրօ Քաթինկօ Տիկին . . . . .		2
Ծպանեան Ատեփան Պէյ . . . . .		1
Ծքարեան Յովհաննէս . . . . .		1
Ծրդարեան Հաճի Յովհաննէս . . . . .		1
Ծրզուման Ոնքայէլ . . . . .		1
Ծրշակ Յակոբոս . . . . .		1
Ծրփաճեան Յակոբ . . . . .		1
Բանոսեան Կարապետ . . . . .		1
Բարլատի Գ. Անքայէլ . . . . .		1
Բարունակ Պէյ . . . . .		1
Բարսեղեան Գրիգոր . . . . .		1
Գաբրիէլ Քահանայ . . . . .		1
Գ. Յ. . . . .		1
Գամալիկեան Պօղոս . . . . .		1
Գառնիկեան Ուարտիրոս . . . . .		1
Գատեան Յարութիւն . . . . .		1

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

= 37 =

ԲԱԺԻՆ

52

Գասպարեան Ռեթէր	1
Գատէմեռան Կարապետ	1
Գարագաշեան Ստեփան	1
Գարակէօվեան Միքայէլ	1
Գարկաւեան Մարկոս	1
Գըլճեան Յովհաննէս	1
Գլխան Ալքր	2
Գրասէրեան Գաբրիէլ	1
Գրիգորեան Մարտիրոս	1
Գօլըեան Վւետիս	1
Եազըճեան Ստեփան Վարդապետ	1
Եազմաճեան Վւետիս	1
Եազմաճեան Երանելի Տիկին	1
Եազմաճեան Մարգար	1
Եգեսեան Յովհաննէս Եպիսկոպոս	1
Ելլորզեան Պօղոս	1
Եռւուլֆեան Յովհաննէս	1
Եռւուլֆեան Տիգրան	1
Եսայեան Եսայի	1
Եսայեան Թովմայ	1
Եսայեան Մանուէլ	1
Եսայեան Յովհաննէս	1
Եսայեան Յովսէփ	1
Երամ Ենտօն	1
Երեքեղքայրեան Մկրտիչ	1

78

Երկանեան Ակրտիչ	1
Երկանեան Ամիսղայոս	1
Երկանեան Պօղոս	1
Օարդարեան Գէորգ	1
Օարժաման Ղրիգոր	1
Օէմպէրէկճեան Խոսրով	1
Օօհրապեան Անարտ	1
Լմինեան Յովհաննէս	1
Լնտաղեան Աւելիք	1
Թագւորեան Բասքալ	1
Թագւորեան Գէորգ	1
Թագւորեան Յովհաննէս	1
Թագւորեան Անդրուէ	5
Թարապուլուսի Աօֆի Տուտու	1
Թէոփիլեան Բասքալ	1
Թընկըրեան Կարապետ	1
Թընկըրեան Յովհաննէս	1
Թընկըրեան Տիմոթէոս Վարդապետ	1
Թիրեաքեան Գէորգ Կարապետ	1
Թիւլպէնտաճեան Անտոն	1
Թիւլպէնտաճեան Կարապետ	1
Թիւլյիւլեան Անդրուէ	1
Թօքաթլեան Բարթուղիմէոս	1
Թօքաթլեան Վարտիկ	1
Թօքաթլեան Մինսա	1

Խնձեմիքեան Արտիրոս	1
Խպէնտէրեան ԱՇԵլքոն	2
Խւթիւճեան Կարապետ	1
Խաթիփեան Պետրոս	1
Խութիւճեան Յարութիւն	1
Խուսարարեան Յովսէփ	1
Խանտուրեան Յակոբ	1
Խաշիկեան Հաճի Կարապետ	1
Խոտիկ Օհնոյք	2
Խոտիկ Յովսէփ	2
Խումարեան Կարապետ Ղֆէնտի	1
Խուրտաճեան Գրիգոր	1
Խուրտաճեան Յովհաննէս	1
Խուրտաճեան Արքուհի Տիկին	2
Խօճասարեան Օդաէն	1
Խօրասանճեան Գէորգ	3
Խօրասանճեան Թովմաս Ղֆէնտի	1
Խօրասանճեան Պետրոս	10
Օաննի Վիչենցո	1
Կարապետօֆ Արդիս	1
Կեսարեան Թովմաս	1
Կէլէլեան Ոկտիէս	2
Կէլէլեան Յովհաննէս	5
Կէլէլեան Պօղոս	2
Կէլէլեան Փիլիպոս	3

Կեօնձիւեան Դաւիթ	1
Կեօչէեան Խաչատրու	1
Կեօչէեան Միքայէլ	1
Կեօչէեան Մերոբէ	1
Կիւզէլեան Ռէթէր	1
Կիւզէլեան Ռօլ	1
Կիւլիւեան Յ. Պ.	1
Կիւմիւշեան Խաչիկ	1
Կիւմիւշիւրտանեան Որուբէն	1
Կիւմիւշիւրտանեան Տիգրան	1
Կիւմիւշեան Գէորդ	1
Կոճիկեան Մնդրանիկ Պէյ	1
Կոճիկեան Յովհաննէս	1
Հաճիեան Տիգրան	1
Համամճեան Սարգիս Եֆէնտի	1
Համբարձումեան Մկրտիչ	1
Համբարձումեան Յովհաննէս	1
Հանրմեան Բ. Յովսէփ	1
Հանրմեան Յ. Յակոբ	1
Հանրմեան Մկրտիչ	1
Հարենց Ըբրահամ	1
Հերիմեան Մրապիոն	1
Հյարդիւրտան Մարգիս	1
Հյուրմիւղ Մերոբէ	1
Հյուրմիւղ Յովհաննէս	1

Հովհաննեսի Յամշաննէս	1
Հօլաս Վիքէն	1
Դաղարոսեան Յակոբ	1
Դանաղեան Մարտիրոս	1
Դանըմեան Մնիկի Տիկին	1
Դանըմեան Մկրտիչ	1
Դանըմեան Յոմիաննէս	1
Դաֆճափեան Մինսս	1
Դերմակեան Բարսեղ	2
Դէպէճեան Յարութիւն	1
Դէվահիրճեան Մնտօն	1
Դէվահիրճեան Կղևաղար	1
Դէվահիրճեան Մոնիկի Տիկին	1
Դիլաճեան Մկրտիչ	1
Դիլաճեան Պօղսս	1
Դիվէլէկեան Յոմիաննէս	1
Մալխազունեան Մարգիս	2
Մալխասեան Մնտօն	1
Մալխասեան Յովսէփ	1
Մալխասեան Մտեփան	1
Մակաղեան Գրիգոր	1
Մաղաքեան Գալուստ	1
Մամուռեան Մատթէոս	1
Մանաս Եփէնտի	1
Մանասեան Մբիկ	2

208

Վանուել Վարդապետ	1
Վանուելեան Ստեփան	1
Վարդարեան Արտէն	1
Վարկոսեան Յակոբ	1
Վաքսուտեան Ախմօն	1
Վեսրոս Վարդապետ	5
Վէլիքեան Նշիազար	1
Վէրասեէտեան Պետրոս	1
Վինասեան Վինաս Լժինաի	1
Վիսաքեան Վւետիս	3
Վիսաքեան Յովսէփ	2
Վիսաքեան Նիկողայոս	3
Վիսաքեան Պետրոս	3
Վիսաքեան Ստեփան	2
Վիսաքեան Վարդերես	5
Վիսլիեան Ժան	6
Վիսքճեան Լութֆի	1
Վիւհէնտիսեան Լժամիկ Տիկին	1
Վիւհէնտիսեան Լուցիքա Տիկին	1
Վիւհէնտիսեան Կարապետ	1
Վիւհէնտիսեան Վարտիրոս	1
Վիւհէնտիսեան Վկրամիչ	1
Վիւհէնտիսեան Յովհաննէս	1
Վիւհայէլեան Ախմօն	1
Վկրեան Յովհաննէս	1

254

Աղքեան Սարգիս	• • • • •	1
Աղքտիչեան Ստեփան	• • • • •	1
Աղքտիչեան Վիշեն	• • • • •	1
Առմձեան Աղքտիչ	• • • • •	1
Առմձեան Գետրոս	• • • • •	1
Առապահեաձեան Յակոբ	• • • • •	10
Առկօֆլու Ստեփան	• • • • •	1
Յ.	• • • • •	1
Յակոբեան Թալմաս	• • • • •	1
Նալբանդեան Միքայէլ	• • • • •	2
Նահապետեան Համբարձում	• • •	1
Նարին Արմօն	• • • • •	1
Ներսեսեան Կարապետ	• • • • •	1
Նէվրուզեան Երմնիկ Տիկին	• • •	1
Նէվրուզեան Հռիփահմէ Տիկին	• • •	1
Նէվրուզեան Յովակիմ	• • • • •	5
Նորատունկեան Գրիգոր	• • • • •	1
Նորատունկեան Յակոբ	• • • • •	1
Նորատունկեան Պաղտասար	• • • • •	1
Նորատունկեան Արմօն	• • • • •	1
Նորատունկեան Աօֆիկ Տիկին	• • •	1
Նորիկեան Նշան	• • • • •	1
Նորիկեան Գետրոս	• • • • •	1
Նուհ Առուբէն	• • • • •	1
Նուրեան Կարապետ	• • • • •	1

Կուրեան Յարսւթիւն . . . . .	1
Կուրեան Յովհաննէս Եփէնտի . . . . .	1
Կալճեան Թագւոր . . . . .	1
Կահանեան Օդսէն Եփէնտի . . . . .	1
Կահազեան Կարապէտ . . . . .	1
Կաշեան Անդրէաս . . . . .	1
Կաշեան Պօղս Տօքթօր . . . . .	1
Կէխեանց Յ. Աղէքսանդր . . . . .	1
Կիշմանեան Մարիամ Տիկին . . . . .	1
Կիշմանեան Միրիման . . . . .	1
Կիշմանեան Յովսէփ Տօքթօր . . . . .	1
Կիշմանեան Պօղս . . . . .	1
Չամիչեան Աննիկ Օրիորդ . . . . .	1
Չամիչեան Գէորգ . . . . .	1
Չամիչեան Յովհաննէս Եփէնտի . . .	3
Չայեան Թառվաս . . . . .	1
Չարազեան Յակոբ . . . . .	1
Չուպուքճեան Գրիգոր . . . . .	1
Չուպուքճեան Քերոբէ . . . . .	1
Չոլագեան Մանուկ . . . . .	1
Պալճեան Թագւոր . . . . .	1
Պաղտասարեան Արեմիա . . . . .	1
Պասղաեան Արմօն . . . . .	1
Պատրիարք Կ. Պօղս Արքաղան Աարդիս Արքեպիսկոպոս . . . . .	10

Պարթեւեան Դէորդ	· · · · ·	1
Պարտիզանեան Թագւոր	· · · · ·	1
Պետրոսեան Մարգար	· · · · ·	1
Պէհզատ Ումբ	· · · · ·	1
Պէյլէրեան Խոսրով	· · · · ·	2
Պէյլէրեան Հաճի Տիկին	· · · · ·	4
Պէյլէրեան Մաքրուհի Օրիորդ	· · · ·	2
Պէյլէրեան Յակոբ	· · · · ·	6
Պէյլէկձեան Եղիազար	· · · · ·	1
Պէյլէկձեան Լուցիքա Տիկին	· · · ·	1
Պէյլէկձեան Շանիկ	· · · · ·	1
Պէյլէկձեան Մ. Թագէոս	· · · · ·	1
Պէյլէկձեան Մարգար	· · · · ·	1
Պէյլէկձեան Ստեփան	· · · · ·	1
Պէնտէրեան Մկրտիչ	· · · · ·	1
Պէշիկթաշեան Ռատնաբաս	· · · ·	1
Պէշիկթաշեան Մկրտիչ	· · · · ·	1
Պէտան Պէյ	· · · · ·	1
Պէղէղիկեան Յովսէփ	· · · · ·	1
Պուլիուրեան Ուուբէն	· · · · ·	1
Պուրունստուգեան Յակոբ	· · · · ·	3
Պուրունստուգեան Տիրուհի Տիկին	· · · ·	1
Պօղոսեան Ղազարս	· · · · ·	1
Պօյաճեան Յակոբ	· · · · ·	1
Պօյաճեան Յովհաննէս	· · · · ·	1

365

Ասմանձեան Մկրտիչ . . . . .	1
Ասմանձեան Մէրէնա Տիկին . . . . .	1
Անտալձեան Թումիկ . . . . .	2
Արագեան Յովհաննէս . . . . .	1
Ագղջեան Յովհաննէս Լքէնտի . . . . .	1
Երովեան Տ. Քրիստափոր Տօթմօր . . . . .	1
Երվիչէն Լքէնտի . . . . .	1
Եւլեան Գաբրիէլ . . . . .	1
Երվաճեան Յարութիւն . . . . .	1
Երվաճը Պետրոս . . . . .	1
Եմօնովիչ Ախմօն . . . . .	1
Ենանեան Գրիգոր . . . . .	1
Ենապեան Գասպար Պէտ . . . . .	1
Եսակեան Գրիգոր . . . . .	1
Երունեան Կարապետ . . . . .	1
Երնկիւճեան Յովհաննէս . . . . .	1
Երոմէլեան Առեգան . . . . .	1
Երապեան Պետրոս . . . . .	1
Եօֆեալեան Յ. Գ. . . . .	1
Եօֆեալեան Վիշն . . . . .	1
Վասիլեան Մերոբէ . . . . .	1
Վասիլեան Քամինքո Տիկին . . . . .	1
Վարդանեան Յովսէփ Բաշա . . . . .	1
Վարպետեան Յովսէփ . . . . .	1
Վրթաննէս Քահանայ . . . . .	1

Տամատեան Անատօնքոս . . . . .	1
Տամատեան Յովսէփ . . . . .	1
Տալուտ Կարապետ Լիֆէնտի . . . . .	1
Տալուտ Մկրտիչ . . . . .	1
Տալուտ Յ. Կարապետ . . . . .	1
Տալուտ Յակոբ Լիֆէնտի . . . . .	1
Տալուտ Պօղոս . . . . .	1
Տալուտեան Վարդան Յովհաննէս . . . . .	1
Տալուտեան Վարդան Տիգրան . . . . .	1
Տէմիրձիսպաշեան Մեպուհ . . . . .	1
Տէյիրմէնձեան Դրիգոր . . . . .	1
Տիւզեան Յովհաննէս Պէյ . . . . .	1
Տօնելեան Յակոբ . . . . .	1
Փափազեան Շնդրանիկ . . . . .	1
Փափազեան Դարեգին . . . . .	1
Փափազեան Հաճի Ըրթին . . . . .	3
Փափազեան Ատեփան . . . . .	1
Փափազեան Վարդան . . . . .	1
Փափազօֆ Համբարձում . . . . .	1
Փէշտիմալձեան Թագուհի Տիկին . . . . .	1
Փէշտիմալձեան Յովսէփ . . . . .	1
Փէշտիմալձեան Արհակ . . . . .	1
Փէքմէզեան Իշթէլ . . . . .	1
Փէքմէզեան Կոմիտաս . . . . .	1
Փիշմիշ Դրիգոր . . . . .	1

418

Փիշմիշ Ո'կտիսիչ	1
Փիշմիշ Ո'ովսէս	1
Փիշմիշ Նշան	10
Փուլձեան Պօղոս	1
Փօրթուգալեան Յօվսէփ	1
Քեահեաեան Գրիգոր	1
Քեահեաեան Մարտիրոս	1
Քիւրքճիւխանեան Մուրատիկ	1
Քիւրքճիւխանեան Պօղոս	1
Քեօսէեան Նշան Լշղեկ	1
Օղուլուխեան Ո'խնաս	1
Օտեան Գրիգոր Լժիշնափ	1
Օտեան Թագուհի Տիկին	1
Օտեան Վիրակոս	1
Օտեան Նշան	1
Օտեան Պօղոս	1
Ջերնանոս Շալլաքի	1
Ջրէնկեան Աբրահամ	1
Ջրէնկեան Գ.	1

446

